

ՍՅՈՒՆԻՔԸ ԸՍՏ ՍԵՊՏԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ք.ա. 9-րդ դարում Վանա և Ուրմիա լճերի ավազանի միջակայքում ընկած հատվածում վերելք ապրեց՝ Բիայնիլի պետությունը (Վանի թագավորություն): Պետությունը նախապես ընդգրկում էր վերոնշյալ շրջանը, սակայն տնտեսաքաղաքական հզորացմանը զուգահեռ Բիայնիլի արքաները արշավանքներ ձեռնարկեցին Հայկական լեռնաշխարհի տարբեր ուղղություններով՝ ընդլայնելով Բիայնիլի պետության սահմանները: Ըստ այդմ՝ նաև Բիայնիլի արքաների ռազմատնտեսական հետաքրքրությունների ծիրում էին գտնվում Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջանները՝ որոնք հիմնականում նշվում են Էթիոնի և Ուդուրի-Էթիոնի անվանումներով¹: Բիայնական արքաների թողած արձանագրություններ գտնվել են նաև հետագայի աշխարհացույցյան Սյունիք նահանգի²: Առկա է տեսակետ, ըստ որի Բիայնական դիցարանի երրորդ՝ արևի աստված Շիվինի անունն աղերսվում է Սյունիք տեղանվան և Սևանա լճի անվան հետ³:

Բանայի բաներ՝ Բիայնիլի (Վանի թագավորություն), Սևան, Հայկական լեռնաշխարհ, Էթիոնի, Ուդուրի-Էթիոնի, Սյունիք, Արգիշթի I, Սարգուրի II, Ռուսա I:

Վանի թագավորության արքաներ Իշպուլինիի ու Մինուայի համատեղ կառավարման շրջանում արշավանք ձեռնարկվեց հյուսիս՝ Ուխտերուխի, Լուշա և Կատարգա⁴: Նրանց օգնության եկան Էթիոնիի բազմաթիվ արքաները: Ար-

1 Էթիոնիի հանդիսանում է որպես ընդհանուր անորոշ անվանում բավական ընդարձակ տարածքի, և այդ անվան ներքո ուրարտացիները նկատի են ունեցել մեծաթիվ կասի հարավային գրեթե ողջ հատվածը՝ Կարսից և Չըլդր լճից մինչև Սևանա լիճն ընկած տարածքը, կամ էլ՝ ամբողջ այն տարածքները որոնք մտել են Ուրարտուի կազմի մեջ: Սևանա լճի ավազանը նշվում է Ուդուրի-Էթիոնի անվանմամբ: Էթիոնիի կազմում եղել են միմյանցից առկախ տարբեր քաղաքական միավորներ և այն եղել է հասարակ անուն, կամ էլ՝ աշխարհագրական անվանում (տե՛ս **Меликишвили Г. А.**, Наир-Урарту, Тбилиси, 1954, էջ 56-57, նաև՝ **Арутюнян Н. В.**, Топонимика Урарту (այսուհետև՝ Топонимика Урарту), Ереван, 1985, 15 262-263): Համաձայն Հ. Կարապոյանի՝ հայ ժողովրդի անունը ծագում է Էթիոն երկրի տարածքն զբաղեցնող ցեղային հզոր միության անունից (տե՛ս **Карагезян О. О.**, *Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам*, Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), N 7, Երևան, 1988, էջ 59-60):

2 Սյունիք-Սիսականը, որպես իշխանություն-կողմնակալություն, ստեղծվել է II դարից առաջ՝ ամենայն հավանականությամբ Տրդատ I-ի (մ.թ.ա. 66-88թթ.) օրոք, իսկ նրա աշխարհացույցյան սահմանների ձևավորումը տեղի է ունեցել III դարում (տե՛ս Հարությունյան Բ., *Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի (պատմաաշխարհագրական դիտարկումներ)*, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), N 1, Երևան, 2003, էջ 139-141):

3 Ըստ Ա. Պետրոսյանի, քանի որ Սյունիքը արեգ/արև արմատներով անվանումների խիտ կենտրոնացման շրջան է, ըստ այդմ ենթադրելի է, որ Սիւնիք < *Siw(i)niyā, տեղանունն արտացոլում է «արև, արևի աստված» նշանակությունը (տե՛ս Պետրոսյան Ա., Ուրարտուի արքայատոհմի և իշխող դասի ծագման շուրջ, -Հայոց ազգածագման հարցեր, Երևան, 2006, էջ 45-46: **Բ. Հարությունյանը**, ելևելով Ստրաբոնի վկայություններից, չի բացառում, որ Սյունիք անվանումը հնդեվրոպական լեզուներին հատուկ հնչյունափոխության արդյունք է և նախապես հնչել է Կյունիք (Կիւնիք) ձևով (տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 138):

4 Ն.Վ. Հարությունյանը սույն արշավանքը թվագրում է Ք.ա. 824-823 թթ., ենթադրելով, որ այն պիտի տեղի ունեցած լինե հարավ-արևելյան շրջաններ կատարված արշավանքից առաջ՝ այդ արշավանքին նախապատրաստվելու համար (տե՛ս **Арутюнян Н. В.**, Биайнили-Урарту (այսուհետև՝ Биайнили-Урарту), Санкт-Петербург, 2006, էջ 119-120): Ուխտերուխին, հետագուտողը տեղորոշվում է Արաքսի վերին հոսանքում աջ ափին, Երիախից (տեղորոշվում է Ախուրյանի հովտում) հարավ-արևմուտք և Աբունիի (միջնադարյան Հավնունիք) միջև, իսկ Կատարգան՝ Երիախից հյուսիս արևմուտք և Դիաուխից (Տայք) արևելք, կամ հյուսիս

ծանագրության մի հատվածում նաև նշվում է, որ արշավանքը ձեռնարկված է եղել հենց Էթիոպիայի արքաների դեմ¹: Հարկ է նշել, որ Վանի թագավորությունն այս արշավանքի ժամանակ կենտրոնացրել էր 15760 հետևակ, 66 մարտակառք, ինչպես նաև զգալի հեծելազոր²:

Իշպուհիսիի և Մինուայի համատեղ գահակալության ժամանակաշրջանում տեղի ունեցած անցքերին է վերաբերում նաև Օծասար լեռան արձանագրությունը³: Արձանագրության հրատարակիչները կարծում են, որ այս արշավանքն ուղղակիորեն առնչվում է բիայնական արքաների՝ Ուիտերուխի, Լուշա և Կատարգա կատարած վերոհիշյալ արշավանքի հետ⁴:

Ըստ Մ. Սալվինիի ընթերցման՝ Իշպուհիսին և Մինուան գրավել են Արծինիե/ա քաղաքը, Արծինիե/ա քաղաքի երկիրը ռազմակալել, այնուհետև նվաճել են Անիա քաղաքի երկիրը⁵: Համաձայն Ն. Հարությունյանի՝ արքաները նվաճել են և ավերել 4 երկրներ՝ Արծինի քաղաքի, Իշ... քաղաքի, Արծիկուա քաղաքի և Այանիանի քաղաքի⁶: Անդրադառնալով այս արձանագրությանը՝ Մ. Սալվինին նշում է, որ այն վկայում է Վանի թագավորությունում սեպագիր դպրության գործածության առնվազն առաջին տասնամյակներին տարբեր դպրոցների գոյության մասին⁷:

Այնուհետև արձանագրությունում նշվում է, որ Պուլուադի երկրում կանգնեցրել են քարակոթող խալդի աստծո պատվին⁸, ինչպես նաև սահմանել հրաման՝ խալդիին զոհաբերելու ցուլ և ոչխար, իսկ խալդիի կնոջը⁹ կով, Պուլուադի

արևելք (տե՛ս **Арутюнян Н. В.**, Биайнили-Урарту, էջ 116-118, նույնի՝ Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУКН), Ереван, 2001, N 31: Մ. Սալվինին նշում է, որ այս արշավանքի թվագրումը հարաբերական է, իսկ արքաների համատեղ կառավարման շրջանը թվագրում է մոտավորապես մ.թ.ա. 820-810թթ. (տե՛ս **Salvini M.**, Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995, էջ 40, Zeittafel von Urartu mit den Assyrischen synochronismen, Karten, 1: Die Feldzüge der urartäischen Könige):

1 Տե՛ս Биайнили-Урарту, էջ 117: КУКН N31 h.4. 4-7:

2 Տե՛ս КУКН, N32 13-14, N33 15-17:

3 Օծասար լեռը գտնվում է Զուղայի շրջանում Սյունիքի աշխարհի երևջակ և Վասպուրականի Գողթն գավառների սահմանագլխին (տե՛ս **Իգումնով Վ. Ա., Կարագյոզյան Հ. Հ., Հմայակյան Ս. Գ.**, Օծասարի սեպագիր արձանագրությունը, ՊԲՀ, N 1, Երևան, 1997, էջ 193):

4 Ըստ հետազոտողների՝ մարտավարական այդ գործողությամբ բիայնական արքաները նպատակ են հետապնդել Լուշայի (Լոռե) գլխավորած դաշնակցությանը զրկել Էթիոպիայի հարավարևելյան իշխանությունների օգնությունից և փակել հյուսիսարևելյան Հայաստանը սնող հիմնական մայրուղին, որը տեղի է ունեցել դաշնակցության գործերին մնալի մատուցներում ջախջախելուց հետո (տե՛ս **Իգումնով Վ. Ա., Կարագյոզյան Հ. Հ., Հմայակյան Ս. Գ.**, նշվ. աշխ., էջ 200): Ենթադրելի, որ արևելք շարժվելով բիայնական արքաները, լուծում էին ռազմավարական խնդիր՝ հյուսիսային շրջանների հետ կապված հետագա քաղաքականության հարցում, որն էլ կարող էր հանգեցնել գուցե նրանց նախահարձակ լինելուն (հմմտ. **Меликишвили Г. А.**, նշվ. աշխ., էջ 251):

5 Անդրառնալով արձանագրությունում նշվող տեղանունների եզակի վկայությանը՝ Մ. Սալվինին նշում է, որ այս բնակավայրերը Իշպուհիսիի և Մինուայի օրոք առաջին անգամ արշավանքի թիրախ են դարձել, հավանաբար, հետագա բիայնական արքաների կողմից նման ներխուժումներ չեն եղել (տե՛ս **Salvini M.**, Eine urartäische Felsinschrift in der Region Nachičevan, Zeitschrift für Assyriologie und Vorderasiatische Archologie, Bd. 88/1, Berlin-New York, 1998, էջ 96, նույնի՝ Corpus dei testi urartei (այսուհետև՝ CTU), vol. I, Roma, 2008, A 3-8):

6 Ն. Հարությունյանը կարծում է, որ սկզբնաղբյուրում տարածքային նվաճման մասին փաստ առկա չէ (տե՛ս **Հարությունյան Ն.**, *Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ Նախիջևանի սեպագրում*, ՊԲՀ, N 2, Երևան, 2000, էջ 210-211, КУКН, N 39a):

7 Տե՛ս **Salvini M.**, Eine urartäische Felsinschrift in der Region Nachičevan, էջ 95:

8 Մ. Սալվինին կարծում է, որ ամենայն հավանականությամբ խոսքն այստեղ հենց նշված արձանագրության մասին է (տե՛ս նշվ. աշխ., էջ 97):

9 Ըստ Մ. Բադայանի՝ արձանագրությունում նշվող խալդիի կինը կարող է լինել նաև տեղի

երկրում¹: Ելնելով վերոնշյալից, արձանագրությունում նշվող բնակավայրերի հետագա կարգավիճակի հետ կապված ենթադրելի է, որ այստեղ հաստատվել է բիայնական գերիշխանություն²:

Սույն փաստը հաստատում է նաև այն հանգամանքը, որ Վերին Անձավից գտնված բրոնզե օղերի վրա նշված է Ամուշա քաղաք-պետության նվաճումը³: Ուշագրավ է, որ Իշպուհնիի և Մինուայի անվան կողքին նշվում է նաև Մինուայի որդի Ինուշպուայի անունը: Այս իրողությունը վկայում է, որ բիայնական արքաները հետագայում ևս հյուսիս-արևելյան շրջաններում շարունակել են զարգացնել իրենց հաջողությունները⁴:

Վանի թագավորության արքա Արգիշթի I-ի օրոք, պետության վերելքով պայմանավորված, հյուսիսարևելյան շրջանների հետ կապված քաղաքակա-նության հարցում նոր փուլ սկսվեց: Խոռխոռյան տարեգրությունում 3-րդ տար-վա՝ մ.թ.ա. 784թ.⁵ իրադարձությունների վերաբերյալ նշվում է, որ Արգիշթին գրավել է Էթիունին և հասել է մինչև Իշքիգուլու և Ուդուրի-Էթիուխի երկրները⁶:

աստվածուհին. Խալդիի պաշտամունքն ավելի հեշտ տարածելու համար նրան «ամուսնացրել» են այդ աստվածուհու հետ (տե՛ս **Բադայան Մ.**, Ուարուբանին, Բագբարթուն (Բագմաշթուն) և Օձասարի արձանագրությունում հիշատակված «խալդիի կինը», - Հայոց պատմության և մշակույթի նվիրյալը (Հանրապետական գիտական նստաշրջանի կյուբերի ընտրանի, նվիրված անվանի պատմաբան, թանգարանագետ Լավրենտի Աշոտի Բարսեղյանի ծննդյան 80-ամյակին), Երևան, 2018, էջ 122-123):

1 Պուլուադի երկիրը տարածվել է 70 կմ-ից ավելի ներկայիս Ջուղայի շրջանից մինչև Իրակի հյուսիս-արևելք՝ Սեկենդել բնակավայր (տե՛ս KYKH, էջ 58, ծան. 10, Salvini M., Eine urartäische Felsinschrift in der Region Nachičevan, էջ 95): Քանի որ աղբյուրագիտական նույնը հնարավորություն չի ընձեռում հստակ ուրվագծել Պուլուադի երկրի սահմանները, ենթադրելի է՝ հետագայի Սյունիք աշխարհի արևմտյան գավառների՝ առնվազն Ճահուկի, Երևնակի և Արևիքի որոշ տարածքներ մտել են Պուլուադի երկրի կազմի մեջ:

2 Հմմտ. **Իգումով Վ. Ա., Կարագոյան Հ. Հ., Հմայակյան Ս. Գ.**, նշվ. աշխ., էջ 200 ծան. 30: Այստեղ նշվող տեղանունների վերաբերյալ առաջարկվել են հնդեվրոպական նախալեզվի արմատների հիման ստուգաբանություններ (տե՛ս նույն տեղում, էջ 195-196): Ն. Հարությունյանը, թեև սույն արձանագրության տեղանունների պարագայում նման մոտեցումը քննադատում է, սակայն ավելի ուշ այս տարածաշրջանը ներառում է մ.թ.ա II-I հազարամյակների վաղ հայկական ցեղերի և ցեղային միությունների արեալի մեջ (տե՛ս **Հարությունյան Ն.**, *Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ Նախիջևանի սեպագրում, էջ 207, նույնի՝ Հին հայկական տեղանուններն ու ցեղանունները սեպագիր աղբյուրներում և նրանց պատմական արմատները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, N 20, Երևան, 2001, էջ 179-181*):

3 Ն. Հարությունյանը կարծում է, որ սույն Ամուշան նույնական չէ Ծղուկի արձանագրությունում հիշատակվող, և նույն շրջանում Իրդուայի հարևանությամբ տեղորոշվող Ամուշայի հետ (տե՛ս KYKH, Послесловие, N 2, ծան. 3, Топонимика Урарту, էջ 26-27, CTU, vol., IV, Roma, 2012, B 4-1 A-D, B 4-2):

4 Տե՛ս **A.M. Dinçol, B. Dinçol**, Die neuen Inschriften und beschrifteten Bronzefunde aus den Ausgrabungen von den urartäische Burgen von Anzaf, Fs. Houwink ten Cate, Istanbul, 1995, էջ 36:

5 Արգիշթիի գահակալությունը Գ. Մելիքիշվիլին թվագրում է մ.թ.ա. 786-764թթ., որն առավել ընդունելի է դարձավ մասնագիտական գրականության մեջ: Ներկայումս, սակայն նման թվագրումը միանշանակ չէ, և ըստ այդմ վերանայվում է նաև նախորդ և հաջորդ արքաների գահակալության թվագրումը (տե՛ս մանրամասն Fuchs A., Urartu in der Zeit, Biainili-Urartu, The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, «Acta Iranica», 51, Peeters, 2012, էջ 150-153, 158, Գրեկյան Ե., Արգիշթի I արքայի գահակալության տարիների վերաթվագրության հարցի շուրջ, ՊԲՀ, N 3, Երևան, 2016, էջ 178-190):

6 Տե՛ս KYKH, N 173, Ծ. I ²¹⁻²², CTU, vol. I, A8-3, I): Այստեղ Ուդուրին նշվում է ցեղի ցուցիչով՝ ^mú-du-ri ^{KUR}e-ti-ú-hi-ni ձևով, իսկ Սարդուրի II-ի տարեգրությունում և Քռայի արձանագրությունում KUR՝ երկիր ցուցիչով (տե՛ս ստորև): Ն. Հարությունյանը Ուդուրի-Էթիունին տեղորոշում է Սևանա լճի հյուսիսարևմտյան շրջաններից մինչև հարավարևմտյան հատվածը և ենթադրում է, որ հարավարևելյան սահմանները տարածվել են լճին զուգահեռ. այն եղել է Էթիունյան

Ն. Հարությունյանը, հիմք ընդունելով սույն տարում որպես ավար եղջերավոր անասունների համար նշվող մեծ թիվը, ենթադրում է, որ այն պայմանավորված է եղել նաև զարգացած անասնապահությամբ աչքի ընկնող Ուդուրի-Էթիունիի հաշվին¹: Բացառելի չէ, որ բիայնական գորքերը Ուդուրի-Էթիունի կարող էին հասնել նաև Վարդենյաց լեռնանցքով²:

Արգիշթիի տարեգրությունում նշվում է մ.թ.ա. 782թ. Էթիունի և այնուհետև Քիխունի արշավելու և Ալիշտու հասնելու մասին³: Լճաշենի արձանագրությունում նշվում է, որ Արգիշթին նվաճել է Քիեխունին և հասել է մինչև Իշտիկունիոն⁴: Հարկ է նաև նշել, որ այս իրողությունների հետ կապված սկզբնաղբյուրում Ուդուրի-Էթիունի երկրի մասին վկայություն առկա չէ: Սույն մարտավարական գործողությամբ բիայնական ուժերը, ըստ էության, կանխում էին նաև հնարավոր հետագա հարձակումները՝ վերահսկողության տակ վերցնելով Սևանի լեռնանցքը:

Տարեգրության շարունակությունում Էրեբունու կառուցման հիշատակությունից հետո նշվում է Ուբուրդա երկիր արշավելու և «արքայական քաղաք» Իրդուայի նվաճման մասին⁵: Իրդուան սկզբնաղբյուրում նշվում է «արքայական քաղաք», ինչպես Սարդուրյան տարեգրությունում հիշատակվող Իրդուան (տե՛ս ստորև): Որպես վարկած բացառելի չէ, որ Էրեբունու հիմնադրումից հե-

ցեղերի համեմատաբար ուշ տարածման արեալ (տե՛ս Топонимика Урарту, էջ 198-199): Ըստ Հ. Կարազոյցյանի Սևանա լճի ավազանի երկրները բիայնական աղբյուրներում հիշատակվում են մեկ միասնական անվան տակ՝ Վեդուրե Էթիու, որը հնչել է վեդոր և համընկնում է հնդեվրոպական հիմք լեզվի վեդոր՝ ջուր բառի հետ և նշանակում է Ջրային Էթիու (տե՛ս **Կարազեղզեան Յ.**, Հայկական լեռնաշխարհը սեպագիր տեղանուններում, Երևան, 1988, էջ 175): Վ. Խաչատրյանը ենթադրում է, որ Ուդուրին հին հայերենի «կտոր, պատառ» բառը կարող է լինել՝ Էթիունի երկրի մեկ այլ մաս (տե՛ս Խաչատրյան Վ., Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում, Երևան, 2012, էջ 126-127):

1 Տե՛ս Биайнили-Урарту, с. 158:

2 Ս. Հմայակյանը նման տարբերակ ենթադրում է դեռևս Իշտիկունիի և Մինուայի համատեղ գահակալության շրջանում (տե՛ս Հմայակյան Ս., Ուրարտուի ոսկին,-Հին Հայաստանի ոսկին (մ.թ.ա III հազարամյակ-մ.թ. XIV դար), Երևան, 2007, էջ 89):

3 Տե՛ս КУКН, N 173 ст. II25-31, N 174 A21-13: СТУ, vol. I, A 8-3 II, A 8-1Vo:

4 Ն. Հարությունյանը Քիեխունին տեղորոշում է Հրազդանի շրջանում, իսկ Իշտիկունիոն քաղաքի երկիրը՝ Սևանա լճի հյուսիսարևմտյան հատվածում (տե՛ս Топонимика Урарту, էջ 96, КУКН, N 180, Биайнили-Урарту, էջ 108-109, 163): Մ. Սալվինին, սակայն արձանագրության ընթերցումից ելնելով, Իշտիկունիոն երկիրը տեղորոշում է Սևանա լճի հյուսիսարևելյան շրջանում, իսկ Քիեխունին՝ ծայր հյուսիսային հատվածում (տե՛ս **Salvini M.**, The Historical geography of the Sevan Region in the Urartian period.-*The North-Eastern Frontier Urartians and non-Urartians in the Sevan Lake basin*.I. The Southern Shores («Documenta Asiana», VII), Roma, 2002, էջ 42-43, СТУ, vol. I, A 8-11:

5 Գ. Մելիքիշվիլին Ուբուրդան աղերսում է Սարդուրյան տարեգրությունում հիշատակվող Ուեիրդա ցեղանվան հետ, որի «արքայական քաղաքը» դարձյալ հիշատակվում է Իրդուա ձևով: Հարկ է նաև նշել, որ հեղինակը Իրդուան փաստերի սակավության պատճառով տեղորոշում է Արարատյան դաշտում (տե՛ս **Меликшвили Г. А.**, նշվ. աշխ, էջ 65-66, 256, 265): Ըստ Ն. Հարությունյանի՝ Ուեիրդան ցեղային միության առաջնորդի անունն է: Տարեգրություն շարունակությունում հիշատակվող Խախի տեղանվան Եկեոյաց գավառում ենթադրյալ տեղորոշումից ելնելով՝ հեղինակն Իրդուան տեղորոշում է Դիաուխից հարավ, կամ՝ հարավ-արևելք (տե՛ս Топонимика Урарту, с. 90, 227-228, Биайнили-Урарту, էջ 165-166, նաև՝ **Diakonoff I.M., Kashkai S.M.**, Geographical Names According to Urartian Texts, Bd. 9, Wiesbaden, 1981, էջ 92): Ֆ. Քյոնիգը ևս կարծում է, որ եղել են Իրդուա անունով երկու քաղաքներ, որոնցից մեկը Ուբուրդայում, իսկ մյուսը՝ Էթիու երկրում: Ուբուրդան հետագուստը նույնացանում է Պողոմենուի հիշատակած Obordēnē-ի հետ (տե՛ս **König F. W.**, Handbuch der chaldischen Inschriften (այսուհետ՝ Hchl), Bd. I/II, Craz, 1955/1957, էջ 90, ծան. 8, նաև՝ **Salvini M.**, Geschichte und Kultur der Urartäer, էջ 61):

տո տեղի է ունեցել նաև Իրդուայի գրավումը՝ հարավից սպառնացող հևարավոր վտանգը վերացնելու համար¹:

Վանի թագավորության հաջորդ արքա Սարգուրի II-ի (մ.թ.ա 764-735թթ.) արձանագրությունում մ.թ.ա. 753/752թ. թվագրվող իրադարձությունների վերաբերյալ նշվում է Մուրիսիին՝ Ուելիքուխի² երկրի արքային, ինչպես նաև Ծիսալիբիին՝ Լուեխուի որդուն՝ Տուլիխու քաղաք-պետության³ արքային հևագանդեցնելու մասին⁴: Սևանա լճի հարավարևմտյան հատվածում գտնված արձանագրությունը փաստում է, որ մարտում «արքայական քաղաք» Տուլիխուն նվաճելով՝ արքան *հատել է միսչև* Ուղուրի-Էթիունի երկիր⁵, արքային բևակչության հետ տեղահանել է⁶:

Սարգուրի II-ի տարեգրությունում 751/750 թթ. իրադարձությունների վերաբերյալ նշվում է, որ արքան արշավել է Էթիունի երկիրը և Լիքիու երկիրը⁷: Այնուհետև շարունակելով նվաճումների թվարկումը՝ արքան նշում է, որ գրավել է Էդիան՝ «արքայական քաղաքը» Աբիասաիսիի, Իրկուաիսիին՝ «արքայական քաղաքը» Իրուխանիի, Իրդուանիին՝ արքայական քաղաքը Ուելիքուաիսիի⁸: Ստրակացրել է Պուլիսիի արքային՝ նրա վրա հարկ սահմանելով: Այս 4 ամրոցները նվաճել և այդտեղից գերեվարել է 3500 պատանի, 15000 կին, 4000 մարտիկ, 8525 խոշոր և 18000 մանր եղջերավոր անասուններ⁹: Հետևելով Սարգուրիի արշավանքի երթուղուն՝ կարելի է եզրակացնել, որ արշավանքի երթուղին թերևս անցել է Սյունիքի Գեղարքունիք գավառով և Վարդենյաց լեռնանցքով՝ Վայոց Ձոր, այնուհետև՝ Ծղուկ¹⁰:

Սարգուրիի տարեգրության շարունակությունում մ.թ.ա. 743թ. իրադարձությունների վերաբերյալ նշվում է արդեն Ուելիքուրի-Էթիունի՝ արշավանք կա-

1 Վերևում նշվեց, որ Ամուշա քաղաքի հիշատակությունը փաստում է, որ բիսյանական արքաները արդեն Իշպուխիի և Միսուայի համատեղ կառավարման ժամանակ մուտք են ունեցել Իրդուայի հարակից Ամուշա քաղաք: Հարկ է նաև նշել, որ սույն տարբերակի դեպքում դեռևս մնում է խնդրահարույց Իրդուայի՝ Ուելիքուա երկրի կազմում նշվելը:

2 Գավառի արձանագրությունից ելնելով (տե՛ս ստորև) Ուելիքուաիսի տեղորոշվում է լճի արևմտյան ափին՝ Տուլիխուի հարևանությամբ (տե՛ս Топонимика Урарту, էջ 199): Ըստ Գ. Ղափանցյանի Veliquani > Velaquni ցեղանվան անվումից էլ ծագում է Գեղարքունի տեղանունը (տե՛ս **Капанцян Г. А.**, Историко-лингвистические работы, т. II, Ереван, 1975, էջ 82):

3 Տուլիխուն համադրվում է Սևանա լճի հարավարևմտյան անկյունում գտնվող Սանգար ամրոցի հետ (տե՛ս **Salvini M.**, The Historical geography of the Sevan Region in the Urartian period, էջ 48):

4 Արձանագրությունում մեկ անուն բաց է թողնված (տե՛ս КУКН, N 242, DI+DII₁₋₇, CTU, vol I, A 9-1 I. D): Ուշագրավ է, որ Ուելիքուաիի արքա Մուրիսիի անունը նույնական է Աբիլիանիի արքա Մուրիսիի անվան հետ (КУКН 241 C₃₆, CTU, vol I, A 9-3 II₃₆):

5 Այս հանգամանքից ելնելով՝ Ս. Հմայակյանը Տուլիխուն համարում է Էթիունյան համդաշնության մաս (տե՛ս Hmayakyan S., The Urartians on the Southern Coast of the Lake Sevan, - The North-Eastern Frontier Urartians and non-Urartians in the Sevan Lake basin. I. The Southern Shores, էջ 277):

6 Տե՛ս CTU, vol. I, A 9-6: Հմմտ. КУКН, N 249, Биайнили -Урарту, էջ 188-189:

7 Տե՛ս КУКН, N 241 A₁₃₋₂₁, CTU, vol. I, A 9-3 I: Լիքիուն տեղորոշվում է Սևանա լճի հյուսիսարևմտյան հատվածում (տե՛ս Топонимика Урарту, էջ 126-127):

8 Էդիանի տեղորոշվում է Սևանա լճի և Սիսիան քաղաքի միջև, Իրուխանիին՝ Սիսիանի, Իրդուան՝ Ծղուկի արձանագրության շրջանում (տե՛ս Топонимика Урарту, էջ 89-90, 91-92, 251-252):

9 Ըստ Ն. Հարությունյանի՝ Իրդուան նույնպես եղել է Էթիունյան ցեղային միության միավորներից մեկը (տե՛ս Биайнили -Урарту, էջ 192-193):

10 Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 135:

տարելու և տեղի չորս արքաներին՝ Արքուքիուհինին, **Կամանիուհին, Լուերուհին** հնազանդեցնելու մասին¹: Սևանա լճի հարավարևելյան հատվածում ճովակից գտնված արձանագրությունը փաստում է Արքուքի երկիրը նվաճելու և Ուրտեխի հասնելու մասին²:

Վանի թագավորությունը մ.թ.ա. 743թ. Արպադի ճակատամարտում Ասորեստանյան արքա Թիգլաթպալասար III-ից (մ.թ.ա. 745-727թթ.) կրեց ծանր պարտություն: Այդ պարտությունից հետո Սարգուրի II-ի արշավանքերի թիրախում սկսեցին հայտնվել գերազանցապես հյուսիսային շրջանները: Սարգուրյան տարեգրությունում (մ.թ.ա. 742թ.) նշվում է Ուելիքունի երկրում 22 ամրոցներ նվաճելու, արքա Նիդինին հարկատու դարձնելու և բնակչությանը տեղահանելու մասին³: Սարգուրին, ինչպես նախորդ արքա Մուրինին, այնպես էլ նրա հաջորդ Նիդինին չի զրկում իշխանությունից: Այս հանգամանքը վկայում է, որ բիայնական արքայի գլխավոր խնդիրն էր տեղի առաջնորդին հարկատվության ենթարկելը:

Այնուհետև նշվում է Սևանա լճի ավազանի և հարակից շրջաններում Արքուքի, Ադախու, Լիպրու, Էշումուա, Կամնիու ցեղերի երկրները և Քու՛ալբա, Ուփունի և Տերիա երկրները նվաճելու, 20 ամրոցներ և 120 «քաղաքներ» *մեկ օրում գրավելու մասին* ⁴: Մեկ օրում գրավելու հանգամանքը հուշում է ռազմական գործողությունների թիրախում հայտնված երկրների միմյանցից ոչ հեռու լինելը: Արձանագրության շարունակության ընթերցման և տեղորոշումների հարցում եղած տեսակետները տարբեր են⁵: Արձանագրությունում նշվում է, որ

1 Տե՛ս ԿՅԿԻ, N 241 D₄₇₋₅₄, CTU, vol., I A 9-3 III: Կամանիուն տեղորոշվում է լճի հարավ-արևելքում, Լուերուհին՝ հարավային հատվածի կենտրոնում (տե՛ս Топонимика Урарту, էջ 100-101, 132): Ըստ Ն. Հարությունյանի, արշավանքը պայմանավորված է եղել բիայնական տիրապետության դեմ Ուդուրի-Էթիուլյան ցեղային միության բարձրացրած ապստամբությամբ (տե՛ս Биайнили-Урарту, էջ 204-205): Հարկ է նշել սակայն, որ Սևանա լճի հարավային շրջանները առաջին անգամ բիայնական արքաների արշավանքի թիրախում այս ժամանակ հայտնվեցին: Ս. Հմայակյանը կարծում է, որ Ուդուրի-Էթիուլի ցեղային միությունն իր մեջ ընդգրկել է վերոնշյալ ցեղապետությունները (տե՛ս **Hmayakyan S.**, նշվ. աշխ. էջ 277):

2 Տե՛ս ԿՅԿԻ, N 250, CTU, vol. I, A 9-7: Ֆ. Քյոնիգն այն տեղորոշում է Սևանա լճից հարավ-արևելք ընկած լեռներում, Ս. Սալվինին համադրում Նորաբակ 1 ամրոցի հետ (տե՛ս **König F. W.**, նշվ. աշխ. էջ 32, ծան. 8, **Salvini M.**, The Historical geography of the Sevan Region in the Urartian period, էջ 48): Ըստ Գ. Ղափանցյանի՝ Ուրտեխին համապատասխանում է Արցախին (տե՛ս **Капанцян Г. А.**, Chetto- Armeniaca, Ереван, 1931, էջ 104, նաև՝ **Կարազոյան Հ.**, Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, ԼՀԳ, N 10, Երևան, 1978, էջ 56):

3 Տե՛ս ԿՅԿԻ, N 241 F₁₅₋₂₆, CTU, vol. I, A 9-3 VI:

4 Ս. Սալվինին, անդրառանալով արձանագրությունում M(ցեղ) և KUR(երկիր) ցուցիչներով տարբերակվող վայրերին, նշում է, որ այստեղ «ցեղը» միանշանակ ընկալել հարկավոր չէ, քանի որ տարբերությունը M և KUR ցուցիչները կրող վայրերի միջև հստակ չէ (տե՛ս **Salvini M.**, The Historical geography of the Sevan Region in the Urartian period, էջ 53, ծան. 88):

5 Ըստ Ն. Հարությունյանի՝ Սարգուրից փախչող բնակչության մի մասը ապաստանել է Բամնի և Ուլկիանի լեռներում, որոնց հետևաբար հաշվեհարդար է տեսել, իսկ մյուս մասին՝ թեյշեբան այրել է: Ս. Պետրոսյանը նշում է, որ Ուլքիան նույնական է Արևելասևանյան, իսկ Բամնին՝ Սևանի լեռների հետ. բիայնական զորքերը հետապնդել են Փամբակի և Չողի լեռնանցքով հեռացողներին՝ Շամխոր և մինչև Թարթառի միջին հոսանքում գտնվող Տերիա երկիրը (տե՛ս **Պետրոսյան Ս. Գ.**, Սարգուրի II-ի անդրսևանյան արշավանքի երթուղու շուրջ, ՊԲՀ, N 2, Երևան, 1984, էջ 180-181): Ս. Հմայակյանը Ուլկիանի (Ոսկեան) անունը աղերսում է լեռների ոսկեբեր լինելու հանգամանքի հետևանքով Սևանա լճի հարավային, հարավարևելյան ավազանում (տե՛ս **Հմայակյան Ս.**, նշվ. աշխ., էջ 154-155): Ըստ Ս. Սալվինիի՝ արձանագրությունում նշվում է *Խամնի* և Ուլկիա երկրների գրավումը: Խամնի ընթերցմամբ հերքվում է նաև Արգիշթիի I-ի տարեգրությունում նշվող Բամնի տեղանվան հետ նույնացումը

հյուսիսային շրջաններից Սարգուրի II-ը գերել է 10000 պատանի, 4600 տղամարդ, 23.200 կին՝ 37800 մարդ¹:

Ռուսա I-ի (մ.թ.ա. 735-714թթ.)՝ Նոր Բայազետից գտնված արձանագրությունում դարձյալ նշվում է Ուելիքուխի երկիրը հնագանդեցնելու, *տեղի արքային ստրկացնելու* և *այլ կառավարիչ նշանակելու*, ինչպես նաև հալդիի համար՝ «դարպասներ» և «հալդիի քաղաք» անունով ամրոց² կառուցելու իրողությունը³: Ռուսա I-ը Ծովինարի արձանագրությունում նշում է, որ ստրկացրել է Ադախունի, Ուելիքու(խի), Լուերու(խի) և Արքուքինի երկրների արքաներին՝ ծովից այս կողմ⁴, այնուհետև հաջորդում է ևս 19 արքաների երկրների թվարկում ծովից այն կողմ՝ բարձր լեռներում, որոնց թվում նշվում է նաև Գուրիաի երկիրը⁵: Քսաներեք երկրները մեկ տարում նվաճելու փաստը հուշում է այդ ժամանակահատվածում ծավալված համառ մարտերի⁶ և զգալի տարածքի վրա կատարված ռազմական գործողությունների մասին: Արձանագրության շարունակությունում նշվում է, որ արքան հարկային տարում դարձյալ գալիս է այստեղ, ամրոցներ կառուցում, այդ թվում՝ «Թեյշեբայի քաղաք» անունը կրող ամրոցը⁷ և կառավարիչ նշանակում⁸: Ռուսա I-ը, կառավարիչներ նշանակելով և ամրոցներ կառուցելով, ի տարբերություն իր նախորդի, այստեղ հաստատեց բիայնական գերիշխանություն:

Արգիշթի II-ի (մ.թ.ա 714-685թթ.)՝ Թանահատի վանքի ավերակներում գտնված արձանագրությունից դատելով՝ հավանաբար Էրեբունիում, Էթիունի երկրի արքան ներկայացել է Արգիշթիին⁹: Այնուհետև արքան շարժվել է Ծուլուկու երկիր, մղել է հաղթական ճակատամարտ, Իրդուա քաղաքի մոտ հակառակորդը ստիպված է եղել ընդունել նրա գերիշխանությունը՝ հարկատվության

(տե՛ս Топонимика Урарту, էջ 52, КУКН, N 173, VI^{18, 20}, СТУ, vol. I, A 8-3 VI):

1 Արձանագրությունում նշվում է, ոմանց պատժելու և ոմանց էլ գերի տանելու մասին (տե՛ս КУКН, N 241 F₃₀, СТУ, vol. I, A 9-3 VI):

2 Ամրոցը գտնվել է Նոր Բայազետի մոտ՝ ժայռի վրա (տե՛ս Пиотровский Б.Б., Ванское Царство(Урарту), Москва, 1959, էջ 32):

3 Տե՛ս КУКН, N 388, СТУ, vol. I, A10-1: Գ. Մելիքիշվիլին նշում է, որ Ռուսա I-ն արքային հեռացնելով մերձսևանյան ավազանը դարձնում էր բիայնական մարզ: Ի դեմս «դարպասի» արձանագրությունում նկատի ունեն հալդյան տաճարը (տե՛ս **Меликишвили Г. А.**, նշվ. աշխ., էջ 268):

4 Թվարկման հաջորդականությունից ելնելով՝ Ն. Հարությունյանը Ադախունին տեղորոշում է լճի արևմտյան ափին՝ Ուելիքուխից հյուսիս, Լուերու(խի)-Լուխարուն՝ հարավային հատվածում (տե՛ս Топонимика Урарту, էջ, 12, 132):

5 Տե՛ս КУКН, N 389, СТУ, vol. I, A10-2: Ն. Հարությունյանը այս երկրները տեղորոշում է Վարդեսիսի, Ճամբարակի և Տաուշի շրջանում (տե՛ս Биайнили-Урарту, էջ 218): Ի. Դյակոնովը և Ս. Կաշկայը՝ Սևանա լճից հարավ-արևելք՝ Որոտան և Ադավնո գետերի ավազանում(տե՛ս **Diakonoff I.M., Kashkai S.M.**, նշվ. աշխ., Schematic map): Հ. Կարգոյանը, սույն 19 երկրները տեղորոշում է Եղեգիս և Արփա գետերի վերին հոսանքի շրջանում, և Որոտանի ավազանում (տե՛ս Կարագոյան Հ., Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, էջ 64-65): Համաձայն Վ. Խաչատրյանի՝ Գուրիանի տեղանվան մեջ առկա է հին հայերենի գոռ «խրոխտ, խիզախ» արմատը և իա(յա) ածականակերտ ածանցը. այն, թերևս, Գորիսի շրջանն է (տե՛ս Խաչատրյան Վ., Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում, Երևան, 2012, էջ 108):

6 Տե՛ս Биайнили-Урарту, էջ 219:

7 Ներկայիս Ծովակ և Արծվանիստ գյուղերի միջև: Այն եղել է ռազմավարչական կենտրոն (տե՛ս **Sanamyan H.**, The Fortress of Tsovinar, *The North-Eastern Frontier Urartians and non-Urartians in the Sevan Lake basin. I. The Southern Shores*, էջ 319-324) : Գ. Մելիքիշվիլին Սևանա լճի ավազանում Ռուսա I-ի օրոք կատարված սույն իրողությունները ենթադրում է, որ տեղի են ունեցել նրա գահակալության վաղ շրջանում (տե՛ս **Меликишвили Г. А.**, նշվ. աշխ., էջ 267):

8 Տե՛ս СТУ, vol. I, A10-2¹⁶, հմմտ., КУКН, N 389¹⁶:

9 Ըստ Ն. Հարությունյանի ընթերցման՝ հանձնել է հարկը (տե՛ս КУКН, N411, СТУ, vol. I, A11-3):

պայմանով¹: Այնուհետև արքան շարժվել է դեպի Ամուշա քաղաքը և Բիայնիլի²: Ենթադրելի է, որ Ամուշա քաղաքը գտնվել է Իրդուայի³ և Թանահատի արձանագրության վայրի միջև. արձանագրությունը կանգնեցվել է Ամուշա քաղաքն անցնելուց հետո, երբ բիայնական զորքը շարունակել է ճանապարհը դեպի Սյունյաց լեռնանցք (2700մ), դուրս է եկել Նախճավան գետի վերին հոսանքի շրջան⁴: Համաձայն Մ. Սալվինիի՝ սույն արձանագրությունը վկայում է, որ Արգիշթի II-ի օրոք բիայնացիները վերահսկում էին ներկայիս Նախիջևանը Ստեփանակերտին կապող ճանապարհ⁵:

Ծուլուկու երկիրը վերջին անգամ հիշատակվում է Ռուսա Արգիշթորդու⁶ Այանիսի արձանագրությունում՝ Ծիլուկու ձևով, որտեղ, ի թիվս այլ երկրների, Էթիունիի հետ այն նշվում է Բիայնիլին թշնամական երկրների շարքում⁷: Այս հանգամանքը փաստում է, որ առնվազն սույն արձանագրությունում Էթիունի և Ծուլուկու երկրները նշվում են որպես միմյանցից զատ քաղաքական միավորներ:

Այսպիսով, Սյունիքի հարավարևմտյան շրջանները բիայնական արքաների արշավանքների թիրախում հայտնվեցին դեռևս մ.թ.ա. IX դարի վերջին տասնամյակներին: Արգիշթի I-ի օրոք բիայնական ուժերը հասան Սևանա լճի հյուսիսային շրջանը: Արդեն Սարդուրի II-ի օրոք հյուսիսից մուտք գործեցին Սևանա լճի արևմտյան և հարավային շրջաններ: Բիայնական գերիշխանություն սույն շրջաններում հաստատվեց միայն Ռուսա I-ի օրոք: Ռուսա Արգիշթորդու օրոք բիայնական արքայի իշխանությունը այլևս չէր տարածվում Սյունիքի վրա:

ВАГЕ САРГСЯН - СЮНИК ПО КЛИНООБРАЗНЫМ НАДПИСЯМ - В IX в. до н.э.

на территории между озерами Ван и Урмия развивалось государство Биайнили (Ванское царство). В надписях биайнилских царей есть разнообразная информация про Сюник. Юго-восточные регионы Сюника оказались в центре походов биайнилских царей в последнее десятилетие IX в. до н.э. Во время Аргишти I (до н.э. 786-764) биайнилские войска дошли до северных регионов озера Севан. Во время правления

1 Մ. Սալվինին, Ն. Հարությունյանի առաջարկած արքայի անվան "Za-zi(?)"-ու-ի փոխարեն առաջարկում է KUR-ni? DAN-NU?՝ թշնամուն հզոր ընթերցումը (տե՛ս КУКН, N411^{ՀԿ 13}, СТУ, vol. I, A11-3^{vo 13}):

2 Հմմտ. Գայսերյան Վ., Արգիշթե II-ի Սիսիանի արձանագրությունը, ԼՀԳ, N 6, Երևան, 1985, էջ 78:

3 Ն. Հարությունյանը Ամուշան աղերսում է Ծղուկի շրջանի պատմական Մուցք բնկավայրի անվան հետ(տե՛ս Топонимика Урарту, էջ, 26): Հեղինակը նշում է, որ Էթիունի երկիրն այստեղ հանդես է գալիս Ծուլուկու երկրի առնչությամբ՝ հարավ-արևելքում իր մեջ ներառելով Սիսիանի շրջանը (տե՛ս Հարությունյան Ն. Վ., Արգիշտի II-ի Նորահայտ սեպագիրը, ՊԲՀ, N 3, Երևան, 1979, էջ 102-103): 4. Հովհաննիսյանը, այս արշավանքը պայմանավորում է Չանգեզուրի մետաղական հանածոներին տիրելու հանգամանքով (տե՛ս Оганесян К. Л., Вопросы градостроительства Урарту, ՊԲՀ, N4, Երևան, 1983, էջ 144):

4 Տե՛ս Բ.Հարությունյան, Սյունիք,-Հայկական սովետական հանրագիտարան, հ. 10, Երևան, 1984, էջ 475-477(քարտեզ):

5 Ամուշան եղել է Ստեփանակերտի, կամ Էլ՝ համանման մեկ այլ ռազմավարական կարևոր վայրի անվանումը (տե՛ս Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 102):

6 Արքայի գահակալության տարեթիվը վիճարկելի է. ասորեստանյան արձանագրություններում սույն արքան հիշատակվում է մ.թ.ա. 673/2 և 652թթ., իսկ 646/642թթ. իրադարձությունների հետ կապված հիշատակվում է այլ արքա (տե՛ս Fuchs A., նշվ. աշխ. էջ 149, 158):

7 Տե՛ս СТУ, vol. I, A 12-1 VI₁₁:

Сардури II биайнилские войска с севера вошли в западные и южные регионы озера Севан. Биайнилская гегемония в этих местах утвердилась во времена правления Руса I (до н.э. 735–714). Во время Руса-сына Аргишти (в начале VII в. до н.э.) биайнилская гегемония больше не распространялась над Сюником.

Ключевые слова: Биайнили (Ванское царство), Севан, Армянское нагорье, Этиуни, Удури-Этиуни, Сюник, Аргишти I, Сардури II, Руса I

VAHE SARGSYAN - SYUNIK ACCORDING TO CUNEIFORM INSCRIPTIONS - In the 9th c. BC the state of Biainili (the Kingdom of Van) started to politically rise in the vast area lying between the lakes of Van and Urmia. In the inscriptions left by the kings of Biainili there is diverse information linked to Syunik. The southwestern regions of Syunik became the target of the invasions of the Biainili kings still in the last decades of the 9th c. BC.

Under Argishtil (786-764 BC) the army of Biainili reached the northern regions of Lake Sevan. Already during the reign of Sarduri II it penetrated into the western and southern regions of Lake Sevan from north. However, the supremacy of Biainili was established in these regions only under Rusa I (735-713 BC). At the time of the kingship of Rusa, son of Argishtil (the first half of the 7th c. BC) Biainili's hegemony did no more extend over Syunik.

Key words: Biainili (the Kingdom of Van), Sevan, Armenian Highlands, Etiuni, Uduri-Etiuni, Syunik, Argishtil I, Sarduri II, Rusa I